

ՏԵՐ ԵՆ ԾՆՈՐԷՆ

Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որևէ

գրու թիւն պետք է ուղղել աս

Տեղին ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի

ԳԱՅԻՐԷ (Նախախառնի)

Թի.


E. THOROSSIAN

Direct. propr. du journal arménien

ARCHELOUICE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե.Գ.ԳՏՈՒԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դանկին.	60
Վեց ամիսայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան	20
Վեց ամիսայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԿ ԵՆ ԹՂԹԱՍԱՐԻ ԺԱԽՔԸ ԽՈՐԱԳՐՈՒՔԵԱՆ ՎՐԱՅԻՆ

Ներքազրուքեան ուղղուած գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԿ Կանխիւրդ ճարտի ԵՆ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱՆՈՅՍ»

ՀԻՄՆԵԱՆ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱԲԱ ԱՊՏԻՆ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԸ

Օտնակի ղեկարանին ղիւնացի փողոցին մեջ.

Տարբանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7 ԵՎ մինչև երեկոյեան ժամը 8. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մարտը և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երգարտարաններ, Գիթեր, Հրապարակներ, Մանկագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագրութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆՈՒԿ ԵՆ.

ԱԶԳ

Կը խնդրուի մեր թէ՛ տեղական և թէ՛ արտասահմանի Պատուարժան բաժանորդներէն որ բարեհաճին շուտով կարգադրել իրենց յետամնաց հաշիւներն, թերթի հրատարակութեան նիւթական դժուարութիւններն մեր վրայէն թերթեցնելու ազնիւ և բարի մտածումով:

ՄԵՐ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բարիք գործել. այսինքն նման մարդու պէտք ունեցածը ընուլ կամ զայն իր ուղածովը գոհացնել մարդկային պարտականութեանց է՛ն կարեւոր մասը կը կազմէ:

Մարդիկ շատ անգամ իրենց աչքին առջև պարզուած աղբխարչ տեսարաններէն այնքան կ'զգածուին և հոգեկան այնպիսի ինքնազոհ սթափումներ կ'ունենան որոց թողած տարւորութեանը ենթական եթէ իրենք ըլլային գուցէ բարեգործութիւնը աւելի ևս պարտաւորիչ համարուէր քան այսօր որ գրեթէ մոռցուած է չարականութեան և ատելութեան յարածուն յառաջացումին մէջ:

Բարեաց ազգեցութենէն որքան զգաւորէն ցնցուի մարդ, նոյնքանէ ոչ նուազ ազգու և հզօր ճիգով մը կրնայ հետեւիլ բուն բարեգործութիւններուն, որոց փշուրները եթէ նոյն իսկ ցանուած ըլլան այս ու այն հողերու կամ սրտերու վրայ:

Սրտերէ կը բղիթ բարեգործութիւնը և սրտերու վրայ կը ցանուի անոր արգասաբեր հունտերը. բայց ո՛րք են արդեօք այդ բարեգործութիւնները. կրնա՞նք տեսնել:

Ահա առաջիկ օրինակ մը գաւառացի հայ կնոջը վրայ:

«Խուրպանդ եղնիմ, էղբարս, խելք մը սովբեցրու, ո՛րք երթամ, ի՞նչ ընեմ, սա իմ տղուս համար ճար մը՝ որ դպրոց առնեն մարդ եղնի. ու ես՝ իր պէպախս մայրը, ալ զինքը չ'մտածեմ». կըսէր ու բուռերով արցունք կը թափեր դժբաղդ կինը որ կիրակէ առտու մը եկեղեցւոյ դուռը գտաւ զիս, տեղեկանալու համար թէ՛ ո՛րք կ'ընեն բարեգործութիւնը այս երկրին մէջ:

Ու ես՝ ա՛նչ ալ մտցած էի եկեղեցին ու աղօթքը. խելք կնոջ թափած առտու արցունքները իր զաւկին ապագային համար իմ շիղերս ցնցած էին և իմ հոգեկան ամբողջ կարողութիւններս սպառած. և առաջնորդած էի լքեալ կինը մինչև Հայոց Բարեգործական Ընկերութ. սրճարանը գրեթէ ժան - Վալժանի մը պէս. խրատելով զինքը որ ուղղակի գիմէ գտնուող ներքին Տնօրէնին. սակայն ի՞նչ մեծ տարբերութիւն իմ և ժան - Վալժանի մէջ, ժան Վալժան հաց մը գոցցած էր. Փըթի - Ժեյ - վէ՛ր քանի մը տուն իւրայուցած էր իսկ ես՝ հէզ կին մը բարեգործութեան գուռը առաջնորդած էի ծածուկ, որ իր զաւկին ապագան փրկելու ետեւ էր:

Մենք այնպիսի ժողովուրդ մ'ենք, որ լոկ նմանիլը կը սիրենք քան թէ իսկապէս կը հեղինակենք. մենք կ'ընդունինք բարեգործութիւնը առանց սակայն իրականին մէջ բան մը ըլլալը կարենալ տեսնելու: Եւ յորմէ հետէ հայ կինը իր մի քանի վայրկեան լացերովը սրճարանի քաչ սիրտն ալ ցնցեց առանց ու է գոհացումի, ալ անկէ յետոյ պէտք էր հետեւիլ ինձ, որ հետեւած էի մեր բարեգործութեանց տեսակին, ձեռն և շատ անգամ երբեմն ումանց հաճոյական երգիծարանութեանց:

Գաւառացի կինը Բարեգործական Ընկերութենէ ընդունուած չ'էր, իր զաւկին

դաստիարակութեանը համար և ի՞նչու. վասն չի ներկայացնող մը չ'ունենալու և կամ աւելի ճիշտը մեծ աղքատի մը պաշտպան մասը չ'ունենալու անբաւելի մեղքը կը կրէր:

Մինչդեռ միևնոյն ընկերութեան ցեղեկեայ և դիշերային մի քանի պաշտպանեալները հաստատութեան մը մէջ կանոնաւորապէս կը վճարուէին, առանց ամենիտքը արդիւնքի, լոկ վճարուած ըլլալու համար:

Ահա այսպէս գրեթէ քան տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող այս պատուաբեր հաստատութիւնը հակառակ իր այնքան փորձառութիւններուն իզուրը կը վատնէր այնքան դո՛ւմարներ, որոնք աւելի ուրիշ միջոցներով անտարակոյս իրական արգիւնքներ պիտի ցուցնէին մեր հանրութեանը քան այսօր որ ցուալի է ըսել թէ իր բարեգործութիւնները կը ընու անթերի, լոկ ըրած ըլլալու համար... ու հայ կինը կը լացնէ ցարգ. անոր զաւկին համար ինչպէս լոկ ամսական ամենէն համեմատ գումարի մը քանակութիւնը:

Բարեգործական Ընկերութեան ուրիշ մի քանի սաները թէ՛ հոս և թէ՛ իկիպրոս պիտի կրնան արդեօք բացառութիւն մը կազմել ի վերեւ բաժնիս Երանի թէ. սակայն ճշմարտութիւնը մեր բոլոր ընկերութիւններու համար այս է թէ, մինչև այս քան դաշտափայլին զարգացման մէջ, պարտէինք մտածել լոկ այսքան փոքրիկ մտածում մը ոչ զանազանէինք բարեգործութիւնը նպատակին և գործադրութեան կ'անակին քննութիւններովը:

Բարեգործութեանց ամենահաստիքն պատուր պիտի կրնայ հաւատացնել մեզ առեւ քա, մեր ընկերական զանազան բարեաց գործերու երեւումներովը. և եթէ բուն բարեաց տեսակները օրը օրին և ատենը ատենին ներկայացուէին մեր հանրութեան ուշադրութեանը, գէթ սա գասը կարող էինք առնուլ թէ բարիքն է բարիքը և ոչ թէ բարեգործութեան աննպատակ անունը:

ՄԵՎԼԱՎԻ

ԱՆԿԵՐՊԱՐԱՆ ՎԻՃԱԿ ՄԸ

Արդարեւ 1899 թ. տարւոյն մէջ Գահիրէի ողջամիտ և լուրջ գաւառակալը, տոկալու և բարձրանալու բարի տրամադրութեանը կարծես օժտուած՝ ակներեւ յառաջդիւրութիւն մը ցոյց տալու կը ձգնէր. դէպի գիտակցութիւնն՝ ազգային ճտատուը շարժման:

Յառաջդիմական և յետադիմական երկու հակառակադրու ազդերու մեկգլխեկու դէմ մը- դած պայքարը վերջապէս պատճառ մը եղաւ խել մը ընկերութիւններու կազմակերպման:

Այժմեւ թեան այս տարափոխիկ տեսիլէն վարակող խոլ գասակարգը մի քանի տասնակ- ներու բաժնուելով՝ իւրաքանչիւր խորակի մաս մէջ մէկ կ'ընթեւ մէկ հաւաքել, հեշտամոլ էօզպէքիէն Պապէլ-Հատիտ, Մուսքիէն Պէյն- էլ-Սուրէն յարաշարժ կը պարէր:

Յաջողութիւնը կատարեալ էր. որովհետեւ տարբեր տարբեր ծրագիրներով և նպատակներով հիմնուած սոյն նորակազմ ընկերութիւնները իրենց կրան սխիստեմ գտած էին: Յուշիս ամսոյ մէջ էր, թարմ ու եռանդուն երիտասարդ ոյժեր, ժողովրդին մասերը զարգացմանը նպաստելու և Գահիրէի Հայ գաղութին մէջ տարիներէ իվեր արևատացած անյեղլի տիրակալութիւնը բառնա- լու ինչպէս նաեւ նպատակայարար միջոց մը սնորհներու նպատակաւ, Լսարան Ընթերցատուն ընկերութիւն մը կազմելու գաղափարն յղացան, շխտակը վսեմ և նուիրական գաղափար, ձեռ- նարկ մը՝ նախնորքի և օգտաւէտ, որովհետեւ ոչ ազգասիրտներ, ոչ սրբախնտեր և ոչ ալ շահասիրակներ, ազգին բարոյացման ամենա- հզօր ստատարն ըլլալու հանգստանք ունէին. հա- պա՛ Լսարան-ընթերցատուն ընկերութիւնն էր որ պիտի ծառայէր, շինիչ և լուսամիտ գաղա- փարաց տարածման. այդ հաստատութիւնը պի- տի կարողանար տեղս զոյուցիւն ունեցող ապա- կանութեան մէջ գտնուող խաւարածիտները քաղաքակիրթ աշխարհի մակարդակին բարձրա- ցնել:

Ուստի հարկ անհրաժեշտ էր որ ամեն ոք պարտ յանձին հատարելով աշխատէր իւր անակ- ցութիւնը նուիրելու սոյն ընկերութեան բար- գաւաճման և յարատեւութեանը: Ուրեմն մա- ստեր չափաւոր ուսում ստացած և զարգացած երիտասարդներու մաս մը, պարբերական հա- լաքումներ սարքելէ յետոյ, վերջապէս յաջողի- ցան անկախուած արդիւնքը ձեռք բերել:

Ո՛հ ի՛նչ ուրախութիւն, կեանքի ճառքուն մէջ կը գտնուէինք. երիտասարդութիւնը սկսաւ ճաճանչներու և ընկերութեան մէջ լողալ, որովհետեւ լսարանական ընկերութիւնը կազ- մուած էր հանդերձ իւր ընդհանուր և գործա- գիւր ժողովներով, ինչպէս իրաւարար աստանով որ Հուսկ ուրեմն օրէ օր ակնդէտ կ'ապաստէր որպէսզի սոյն նորակազմ ընկերութիւնն ալ իր ստանդին ձեւիւն կատարէ:

Ահա թէ, ինչի՛ք կը լսենք կազմակերպու- թեան շարժք մը վերջը:

Գործադիր ժողովը իր ընտրութիւնէն երկու օր յետոյ, իր գիւմանը կը կազմէ, սովորական Աննապետ, Ատենապետ, Գանձապետ և հաւա- բակալովը: Երրորդ օրը երբ հարկը կ'զգացուի բացառիկ նստի մը գուճարման, սոյն նստին մէջ այդ թիֆնակ ակուսը նորընտիր ատենապետի բացակայութիւնէն օգուտ քաղելով, երկար վիճա- յանուրեմն յետոյ, գաղտնի քուէարկութեամբ, առաջինը գահընկեց ընելով՝ ուրիշ մը կ'ընտրէ, միջոց սա տրաւարանութեամբ թէ՛ լաւագոյն և յարկաւարագոյն ձեւը այսպէս է քանի որ քան և չորս ժամ առաջ իրենց ընտրած ատենապետը կո- չում և գիտակցութիւն չ'ունի այդ պաշտօնին:

Ահա քանզոյ իրենց թիւներու բողբոջումները առաջին քայլին մէջ սկսած է տեսնուիլ: Պաշ- տօնանկ ժողովակներ, բնականաբար առաջին պատենութեամբ սոյն կանխահատ փոփոխուելը ո և է բանի մը չէր կրնար վերագրել, երբէք չի կրնալով կուսնել թէ՛ սոյն ակտիօի ծրագրին մէջ քաջուն նպատակներ եղած ըլլան:

Արդ նոր դիւանը կազմուած, տօնարները և կնիքները պատրաստուած, հաւաքելը կազմ ու պատրաստ, և ահա Լսարան-Ընթերցատուն ընկերութիւնն է որ իր անպիսի կոյտովը կ'սկսի շարժիլ. ալ օրուան մարդիկներն են անոնք, կեանքի զգացումներուն ու գաղափարներուն թարգմանները. այսպէս հինգ երկար ամիսներ շարունակաբար լռիկ միջեկ, անպատակ կ'եր- թան, անձանթ ճարտարներ (պէթ մեզի այսպէս կը թուէր): Զրկանք ու անստուգութիւն, ո՛ւր է Լսարան ո՛ւր է Ընթերցատուն, ի՛նչով կ'զբա-

ղին արդեօք Հիւլոյի, Ռոնանի, Վօլթերի ար- իւնով ժանգոտած այդ վաւերականները:

Այսպէս տարտառ անորոշութիւնէ մը յետոյ, «Արշարյս» ի մէջ հրատարակուած ծանուցում մը գեկա, Յին Ապու-խալիլի թատրոնին մէջ անդրանիկ Լսարանին տեղի ունենալն կ'իմա- ցնէր. այդ օրը ստենարանը պիտի խօսէր Գիւ- ղասնտեսութեան վրայ:

Գիւղուածին օգնութեամբ կազմակերպուած սոյն Լսարանը պէտք էր ամեն ոք քաջակերել իր ներկայութեամբը. ուրեմն հարկ էր որոշեալ ժամուն լսարանի վայրը փութալ և ողջու- նել լսարանի բացումը, սխանաներ կարգալ այդ բարոյականի ներշնչարանին: Որոշեալ ժամը հասած էր. տեսնուող սպասուսներով կու- ղէինք լսել Ատենաբանը, սակայն ցաւալի է ը- սել թէ՛ կ'ծող յուսարախուսներով սկսուած այդ հաւաքումը չի կ'ընդունէր նահանջով մը վերջապա. որովհետեւ ատենաբանը այդ օրը չ'պիտի կարողանար խօսիլ իւր հիւանդութեան պատճառաւ:

Գրեթէ ամիս մը վերջը երրորդ լսարանն էր որ տեղի ունեցաւ, ուր Տիար Երուանդ Տէրերճեան Գեղարուեստի դերին վրայ խիստ յաւոյ կերպիւ խոսեցաւ ալ այնուհետեւ Լսա- րանի վարչութիւնը փութաշարժութեամբ ան- պայաման կերպիւ փակեց իր դռները:

Այդ անկախ մտաւորականներուն քանիցս առաջարկուեցաւ կեդրոն տեղ մը վարձելով Ըն- թերցատունը բանալ. այնպէս ինչպէս Աղեքսանդ- րի սիներ, սակայն առարկուեցաւ թէ ներթա- կանի պակասը խոչնդոտ կը հանդիսանայ նպաս- տաւոր ու նպատակայարար տեղ մը վարձելով Ընթերցատունը հաստատել:

Յուշիպի սկիզբներն էր որչափ կը յիշուի, ինչպէս Ընթերցատան թատերական ներկայա- ցում մը կազմակերպուեցաւ, որուն արդիւնքը թէեւ գանձապետ իր ստորագրութեամբը դեռնա- ստատած չէ՛ ըստ բաւականին գոհացուցիչ էր. ալ սրտերը հանդարտ էր որովհետեւ Ընթերցա- տան մը բացումը պէտք էր այլևս անխուսա- փելի նկատուէր, և պահ մը իրաւամբ կը մտածուէր թէ վարչութիւնը վաղ կամ անագան ժողովրդի այդ արգար բողձանքը արժանելու և հրաշքիւ պիտի ջանայ: Սակայն ցաւալի է ըսել թէ միշտ յուսարախուս...:

Լսարանական ընկերութեան կազմակեր- պութեան օրէն իվեր տասը տիրաներ անցած է. և դեռ ոեւ է օգտակարութիւն մը ցոյց չէ տրուած. նոյն իսկ ոչ հաշիւ և ոչ հաւարատու- ութիւն կայ:

Ուրեմն պէտք է ըսենք թէ. այո՛, կայ Լսա- րանական Ընկերութիւն մը, բայց կազմակեր- պուած ժամին մը գոյութիւն չ'ունի:

Եթէ լուսնիս ստոյգ է, այսօր Լսարանի վարչութեան գրասենյակին մէջ, մտաւորապէս 30-35 ոսկւայ չափ հաւեան գուճար մը կը գտնուի եղեր, ապա ուրեմն ի՛նչու. այդ գրամը իր սուրբ նպատակին չ'ուզուի գործածել:

Ժողովրդի սրտագին բողձանքն է ժամ առաջ ունենալ ընթերցատունը, մենչքեռ ներկայ վարչութիւնը կը ջանայ ամեն անգամ այդպիսի առաջարկներ ընդունելու պոռոտախօսութեան աւետարանը հարբուրել տալով գոհացում տալ:

Տարածաշարժութիւն մը որ 2-3 շաբաթներէ իվեր հրատարակը կ'ողողէ, մի քիչ մտքերը պղտորելու հանգամանքը ունի, սակայն չ'եւ, պիտէր թէ որ աստիճան հաւատք պէտք է ըն- ծայիլ քանի որ այդ լուրը պաշտօնապէս և օրինաւորութեան շրջանին մէջ նկատողութեան առնուած չ'է:

Լսարանի վարչութիւնը մտադիր է եղեր Գահիրէի մէջ կրտաշարժութիւնը մը հրատա- րակել ընդ նախաձեռնութեամբ նոյն վարչու- թեան գործադիր ժողովոյ Ատենապետ և վեց անխնայից իվեր գաղափար «Փիւնիկ» կրտաւա- կայ հանդիսի նմարակիր-Տիար Սմբատ բառի:

Արդարեւ զարմանքէ անլիկ արդահատանք կազգէ ինձ, և տխուր ըլլալէ տեղի գաւեշա- կան կը գտնուի այս ձախող արարքը:

Ի՞նչ ներուի սակայն ինձ անարժանաբար մի քանի խօսք ուղղել Տիար Բիւրատի, ինչպէս

նսեւ Լսարան Ընթերցատան վարչութեանց:

Պ. Բիւրատ եթէ օրագրական հրատարակը երեւալու մտրուէն կը տանջուի, աւելի վսեմ և վեհանքն գործունէութիւն մը ցոյց տուած չ'ըլլար, փոխանակ Լսարան-Ընթերցարանի վարչութիւնները թելապրելու և հարկուելու, որպէսզի իր նմարակութեամբ թերթ մը հրա- տարակուի, իրեն վեց անխնայից իվեր գաղա- ցուցած Փիւնիկը վերսկսելով, որուն գրեթէ բո- լոր տարեկան բաժանորդագրիները գանձած է, ըրած գանձումներուն փոխարինելու չափ աղնիւ և պարտաճանաչ գտնուի, որովհետեւ նմար- գիւր մը, աղնիւ սկզբունքներու տէր մարդու մը անհրաժեշտ յասկութիւններով պէտք է օժտուած ըլլայ:

Գալով Լսարան-Ընթերցարանի վարչու- թեան առարկութիւններուն, որոցով ինքզինք- նին արդարացնել կը ջանան, սա է թէ՛ իրենց ծրագրին մէջ, չ'գիտցուի ի՛նչպէս, կը գտնուի եղեր պարբերական հրատարակութիւններ բառ մը. սակայն զա՛ եթէ կանխաւորութեամբ մը զետեղուած չ'է նոն, չենք կարծեր որ նշանակէ թերթի մը հրատարակութիւնը, որ Եղիպտոսի նման երկրի մը հաւար առ նուազն արևական 20 էն 25 ոսկի ծախքի մը կը կարտի:

Ասիկայ պիտի ծանրանայ ընթերցարանի անուսին վրայ. և քանի որ Լսարան-Ընթերցա- րան մը բանալու անուսով և նպատակաւ ժո- ղովրդէն հաւաքուած գուճար մը այսօր բոլոր- վին քանահօրէն տարբեր նպատակի մը կը գործածուի, բացայայտ է թէ վճարող ժող- վուրդն ալ ինքզինքը խաղաւած հաւարակել, այլ ևս չ'պիտի ուզէ յետ այսու օժանդակել ո՛չ մի- այն Լսարան-Ընթերցատուն ընկերութեան, այլ և նմանօրինակ ուրիշ ընկերութիւններու ալ. որով ո՛չ միայն ընդհանրական ձեռնարկները պի- տի վնասուի մեծապէս, այլ և Լսարան Ընթեր- ցատունն ալ մեծագուճար պարտքի մը տակ պիտի ինչայ, այն ատեն վարչութեան արդի անդամներուն ո՛ր մէկը պիտի հաճի վճարել իրենց ձախող որոշումներն յառաջացած վնասը եւ՛ ո՛վ պէտք է պատասխանատու մնայ:

Իրաւունք ունէինք արդարեւ գործունէու- թիւն յուսալ Գործ, ժողովին, սակայն այսօրի- նակ վտանգաւոր ձեռնարկ մը Լսարան Ըն- թերցատան ծրագրին և ողբոյն հաւապատա- խան չ'է կարծենք, մանաւանդ երբ հակառակ եղած գիւնուսներուն Ընդ. ժողովոյ անդամաց նկատառութեան ենթարկուած չ'է:

Ահա Լսարան-Ընթերցատուն անուսով մկրտուած ընկերութեան միտնեայ գործունէ- ութեան արդիւնքը, որ եղած է գրեթէ տարիէ մը իվեր ընկերութեան անունը փոխելու մտա- ծուած. ի՛նչ հրաշալի գիւտ, շրջուն Լսարան-Ըն- թերցատուն, անպատճառ քիչ ատենէն ալ շԵՐ- ջուն վերեղակի (չարչի) պիտի փոխարկեն այդ անունը:

Կարծէ արդարեւ որ Ընդ. ժողովոյ պատ- անդամները, իրենց լուրջ ուշադրութիւնը գարձ- նին կատարուած այս անխնայիկ փոփոխ- ութեանց վրայ և ընթերցատան ապագան ա- գատեն ուրիշ անթերուոյթ փորձանքներէ, որ ներկայ վարչութեան անդամաց վե՛ր ներքէն յառաջ պիտի գան:

Լսարան-Ընթերցատուն ընկերութեան  
Ընդ. գիւտնի Բ. Ատենապետի  
Ե. ՔիւրիՍթիճեան

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՕԵՐ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ  
Կը յայտարարեն թէ՛ իրենց պաշտօնը ոչ միայն աւարտած չ'է այլ գեռ նոր կըս- կրուի. իրենց գործերու ազատութիւնը կա- րենալ Պահելու և ինչպատ իրենց ժող- վրդական շարժում մը ստեղծելու համար իրենց ընծայագիրները (յէրո սք գրեանս) ցոյց տալ ուզած չ'են: Իրենց գառը կը

պաշտպաններն Ամերիկեան կամերին սուջն, որպէսզի այս կարծիքը կառավարութեան վրայ ճշուում մը ի գործ գնէ:

ԳԵՐԻՆԵՐԸ

Պօէր կառավարութիւնը հեռագրով գերիներու փոխանակութեան առաջարկութիւն մը ըրած է ըրտ Ռայերթսի: Եթէ այս առաջարկութիւնը մերժուի Բրէթօրիայի չորս հազար անգլիացի գերիները ուրիշ նահանգ մը պիտի փոխադրուին:

ԹՈՒՐԳԻՍ

Թուրքիոյ և Յունաստանի կառավարութեանց մէջտեղ վիճելի կէտերուն համար Յունաստանը տէրութեանց իրաւախօսութեան դիմած է: Տերութեանց ներկայացուցիչները որոշած են այդ խնդիրը իրենց կառավարութեանց ներկայացնել:

Ներածութեանց իրաւանց վրայ խօսելով, պետութեանց ներկայացուցիչները որոշած են այս իրաւանց բարձրացումը ընդունելու համար գլխաւորաբար Անգլիոյ և Աւստրիոյ կողմէ թելադրուած յաւելումաժական պայմաններուն քննութիւնը յետաձգել:

— Պոլսոյ Ամերիկեան գործակատարին վերջին նօթան ապահովարար վերջնագիր մը է: Բայց առանց վերջնագիր մը ըլլալու, դիւանագիտական նօթաի մը չափ ազգաւ է կ'ըսուի:

Հաւանական է որ ծայրայեղ միջոցներու դիմելէ առաջ, նախագահը խորհրդարանին կարծիքը առնէ: որովհետեւ այն միայն կրնայ հրատարակել պատերազմը: այնպէս որ գործադիր իշխանութիւնը իրեն հետեւելիք քաղաքականութեան մէջ կարենայ վստահել Խորհրդարանին օժանդակութեան վրայ:

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիոյ պատգամաւորին առողջապահական վարչութեան ըրած յայտարարութեան կը հետեւի թէ՛ Գերմանական առողջապահական վարչութիւններն որոշած են միւսնոյն միջոցները գործադրել միջերկրականի եզրագծան նաւահանգիստներէն և Սուէեկիոյ ամեն շոգենաններուն, անցեալ տարուան Ազգաբնակչոյ մէջ ծագած ժանտախտին առեւ եղածին նման:

ՀԵՂԱՍՏԱՆ

Հնդկաստանի Պետական քարտուղարը Պոմպէի և շատ մը նահանգներու մէջ քոլերային պատճառած մեծ կոտորածները ծանուցանող հեռագիր մը ստացած է:

Առատ անձրեւներ տեղացած լինելով խմելիք ջուրի պաշարներն աւելցած են:

Կառավարութեան նպաստով ապրող թշուառներու թիւը 5, 607, 000ի կը հասնի: միայն Պոմպէի մէջ 1, 235, 000 հոգի կայ նպաստ ընդունող:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՐՁՐ ԽՏԻՎԸ. — Ն. Բարձրութիւն Խտիվը այսօր կը մեկնի Ազգաբնակչոյն իւր Մանրուսա զբօսանաւով, ընկերակցութեամբ Ն. Բարձրութեան Խտիվուհին, իշխաններուն, իշխանուհիներուն և զաւակներուն: Մանրուսա ուղղակի Թրիեսթէ կը մեկնի. ուրիշ Ն. Բարձրութիւնը Վիեննա,

անտի Գերմանիոյ ճակատ Անգլիա պիտի երթայ, իսկ Ն. Բ. Խտիվուհին և իշխանուհիները Թրիեսթէէն պոլիս պիտի երթան:

ՀԱՆՐՈՑ. — Պարոն Գարթիէ և Սախա էֆ. Սելիմ Հօշէլ-Նարգափի փողոցը նազար անուն հայու մը խանութէն վեց պարկ հաշիշ գրաւած և կառավարութեան զրկած են:

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԲԱՐՔԵՐ. — Սուտանի մէջ զտուած ջուրը հազուագիւտ ըլլալով, իշխանութիւնները միմիայն Եւրոպացիներուն զտուած ջուր բաժնուելու քմահաճ որոշումը տուած էին:

Սուրախ Ենք իմանալով որ Սէրտարը որոշած է որպէսզի ջուրը անկողմնակալօրէն բաշխուի հաւասարապէս թէ՛ Եւրոպացիներուն և թէ՛ տեղացիներուն:

ԵԿԻՊՏԱԿԱՆ ԳՐԱՄ. — Ելմտական նախարարութիւնը Պերլինի փողերանոցին, 2000՝ Եգպ. ոսկիի նիգէլ գրամներու նոր յանձնարարութիւն մը ըրաւ, հետեւեալ ստորագրած անուամբերով:

750 Եգպ. ոսկիի 10 միլիոննոց, 1000 Եգպ. ոսկիի 5 միլիոննոց 50 Եգպ. ոսկիի 2 միլիոննոց և 200 Եգպ. ոսկիի 1 միլիոննոց:

ՄԵՏԱԼՆԵՐՈՒ ԲԱՆԺՈՒՄԸ. — Ազգ. քսանդրիոյ զօրանոցին հրամանատար, զօրավար Լան, Բաս-էլ-Դինի զօրահանգիսի գաշտին վրայ, եզրագծական, երրորդ շոկատի զինուորներուն յանձնեց, Սուտանի պատերազմին առթիւ Ն. Վեհափառութեան: Վիթթորիա թագուհույն կողմէ շնորհուած կայսերական մետալներն:

ԺԱՆՏԱԿՑ. — Ժանտախտի նոր դէպք մը պատահած է Ազգ. քսանդրիոյ մէջ. Միւնէթ-էլ-Պասալի միջերանոցներէն միոյն տեղացի պահապանը դիշեր տտեն մեռած գտնուած է: Այս հաստատութեան հետեւնօք Առողջապահական վարչութիւնը յաշորդ որոշումը տուած է, ժանտախտի դէպք մը հաստատուած ըլլալով Ազգ. քսանդրիոյ մէջ, այս օրէն ըսկտեալ չպէտք են ձեռնարկ մեկնման պահուն հարկ եղած առողջապահական միջոցները վերստին պիտի հաստատուին:

ԹՂԹԱՏԱՆՅ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ. — Առողջապահական միջոցներու հետեւնօք որոշած է որ Թուրքիա, Սուրիա և Թարապուլուս նմոյշներ և ծրարներ չ'ըրկուին, ց'նոր տնօրինութիւն:

Յունիս 1 էն սկսեալ Սուտանի հետ փոխանակուած «Մանտա-փոսթերուն» սակը պիտի գեղջուի հետեւեալ կերպով. մէկ եզրագծական ոսկիոյ կամ կոտորակին համար 5 միլիէմ. իւրաքանչիւր «Մանտա»ի համար աւ առաւել 10 միլիէմ սակով:

Թայլըին մէկ նօթը. — Ն. Բ. Խտիվին Եւրոպա ընելիք ճամբորդութեան վրայ խօսելով, կը հաստատէ թէ՛ նորին Բարձրութեան Անգլիա այցելութիւնը քաղաքական ո՛ր է հանգամանք չ'ունի, բայց յուսալի է թէ՛ պիտի կրկնուի և պիտի ծառայէ Խտիվին և Անգլիոյ մէջ հաստատուած յարաբերութիւնները ամրապնդելու:

Սուլթանին շահերը երբէք վտանգի մէջ չ'են և կարեւոր դատուած չ'է անոր խորհուրդը առնելու:

Գահիրէի քայլերի թղթակիցը պաշտօնական աղբիւրներէ քաղած տեղեկութեանց

նայելով կ'ըսէ թէ Խտիվը եզրագծան մէջ վրդովիչ համեմատութիւններ առնող խաւմական շարժման մը նպատակաւ չ'է:

Քայլերին եզրագծան նոր թղթակիցը քանի մը օր յաւաճ Գոպպէի պալատին մէջ Խտիվէն ընդունուած է:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

— Լոնտրա 29 Մայիս. — Անգլիական զօրքերը երեկ գրաւեցին Զիրուսքը. սերիշ զօրքեր կը յառաջանան Լիբիէնպուրկի վրայ:

— Գէրթաուն 29 Մայիս. — Օրանտի Անկախ Պետութիւնը այսօր պաշտօնապէս կցեալ յայտարարուեցաւ:

— Բրէթօրիա 29 Մայիս. — Նախագահ Գրիւէրը հարստահարեալներուն ազատման համար, երեք օր ազօր ապախարութիւն և մեղքերու խոտովանանք հրամայեց:

— Թիէն - Չին - Բէիին գացող երկաթուղւոյն երթեկէր վերահաստատուած է, Աքսիզակ թնթանօթակիր շոգենաէն 30 ձարանցի ցամաք ելան:

— Լոնտրա 30 Մայիս. Զօրավար Պուլլըր Լէնկսնէքի յարձակումը սկսած է:

— Լոնտրա 31 Մայիս. — Լորտ Ռօպրթսէն հեռագիր չ'է ընդունուած:

— Լորենսօ Մարքէզ 30 Մայիս. — Բօրթուկալի ամբողջ զինուորները հրաման ստացած է սահմանադրուի երթալու համար պատրաստ կենալու, Բորթուկալի պատերազմական նաւերը ըստ կը կեդրոնանան, Տէլաիօայի երկաթուղւոյն վրայ ապրանքներու երթեկութիւնը առկա մնացած է:

Պօէր հրամանատար մը Գոմաթի Փուրթ հասաւ:

— Բրէթօրիա 30 Մայիս. — Անգլիական սպայները Օհաննէսպուրկ են, անձատուութեան պայմանները առաջարկելու համար. գլխաւոր բանակին յառաջագահը արգէն ժէմիսթընի և Բրէթօրիայի կէս ճամբան է. նախագահ Գրիւէրը Ռարքնկ-թօն գնաց:

— Պլէօմֆօնթէն 30 Մայիս. — Կցման յայտարարութիւնը հոս կարգացուեցաւ. Այսուհետեւ Օրանտի Ազատ Պետութիւնը Օրանտ Ռիվըր Գոյօնի անունը պիտի առնէ:

— Չինաստան Թիէն Չին 30 Մայիս. վեց Ռուսական, մէկ Գալիական և երկու Անգլիական Օրչոնի և Այնթրիկ պատերազմական նաւեր հոս հասած են, Անգլիական Ամերիկեան. ճարտնական. Գերմանական Իտալական և Ռուսական նաւերէն իւրաքանչիւրը 100 մարդ ցամաք հանած են, Բայց Փոխարքան առանց Չունկ-լի-Սամեիի այրտօնութեան, դէպի Բէքին իրենց ճամբան շարունակելու թոյլտուութիւնը ըրած է:

— Լոնտրա 31 Մայիս. — Տէրի մէջ Լորենսօ-Մարքիզէն Օհաննէսպուրկի անձնատուութիւնը ծանուցանող հեռագիր մը կը հրատարակէ:



Կ Է Ս Ո Ւ Կ Է Ն

ՈՐՉԱՓ ԿԱՐԺԷ ԶԻՆՈՒՈՐ ՄԸ

Միացեալ նահանգները 68000 հոգինոց բանակի մը համար 750 միլիոն ֆր. կը ծախեն որ ըսել է 12 000 ֆր. տարին իւրաքանչիւր զինուորի համար, միջին հաշուով 35 ֆր. օրը:

Անգլիան. — 232 000 մարդու համար 505 միլիոն ֆր. կը ծախսէ. ըսել է տարին 2150 ֆր. իւրաքանչիւր զինուորի համար:

Ֆրանսան. — 620 000 մարդու համար 665 միլիոն ֆր. կը ծախսէ՝ ըսել է տարին 1080 ֆր. իւրաքանչիւր զինուորի համար:

Գերմանիան. — 590 000 մարդու համար 940 միլիոն ֆր. կը ծախսէ. ըսել է թէ տարին 1080 ֆր. իւրաքանչիւր զինուորի համար:

Ռուսիան. — 900 000 մարդու համար 800 միլիոն ֆր. կը ծախսէ, ըսել է տարին 900 ֆր. իւրաքանչիւր զինուորի համար:

Աւստրիան. — 360 000 մարդու համար 310 միլիոն ֆր. կը ծախսէ ըսել է տարին 860 միլիոն ֆր. իւրաքանչիւր զինուորի համար:

Իտալիան. — 329 000 հոգինոց բանակի մը համար 250 միլիոն ֆր. միայն կը ծախսէ ըսել է տարին գրեթէ 850 ֆր. իւրաքանչիւր զինուորի համար:

Գ Ա Ֆ Է Մ Օ Ք Ա

Տիգրան Կոստանեան պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փազար-Մրուրի խանութին մէջ պատրաստել եփեցիկի առճին ամենաբարձր և անխաղաղ տեսակէն իրեն գիտող յաճախորդներ օրան 16 դրը ողջի հաշուով, զուտ ֆաւէ պիտի կրնան գնել. կըսոյ մէջ ալ ուղղամտութիւն գտնելով:

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մինչեւ ցարդ սովորութիւն չէ եղած կամ քիչ պատահած է, որ նոյն թերթերու վարչութիւնք մտածած ըլլան հաւաքածոյներու վրայ:

Ստեփան Կոստանի որ այս օրն կամ այն օրն թիւը կուզուի բաժանորդի մը կամ հաւաքածոյ մը ունենալ ցանկացողին կողմէ և գրեթէ գտնել անկարելի կըլլայ:

Մենք «Արշալոյս» թիւը հրատարակման առաջին օրէն, մեր սպասումին քանակը ինկատի ունենալով, քանի մը թիւեր մասնաւորապէս հաւաքածոյի համար աւելի տպագրել տուած և առաջին վեցամսեայն կազմել տուած ենք:

Ուստի, ամեն անոնք որ կը փափաքին «Արշալոյս»-ի ստալին վեցամսեայն կազմուած ունենալ, կրնան դիմել թերթիս ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ, կաթիլաղմին համար 10 ֆրանքի գուճարմը գրեցով մեզ:

ՀԷԼՎԱՆԻ ՎԻ ԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 1 ՅՈՒՆԻՍ 1900					
8049	8506	4676	8332	4420	610
1507	1810	2504	2114	2759	2284
3262	3573	3354	3684	5044	5763
5747	6615	7083	7489	7690	8044
	8660	9119	9259		

Հարգուելի ժողովրդական ՏՊԱՐԱՆԻ

Ա. ՊԱՐՏԱՔ

ՀԱՍՊՈՒՐԿԻ, ՊՐՈՆՍՎԵԿԻ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԶՆԱՆՈՒԹԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել իր կար տարիներ վերոյիշեալ վիճակահանութեանց տոմսերու առեւտուրը քաղաքին մէջ յայտուցութեամբ շարունակել և կատարեալ փորձառութիւն ստանալ վերջ, այս անգամ վերոյիշեալ տոմսերէն մեծ քանակութեամբ սպաւորանք տուած է եւ յետ այսու մինչեւ ցարդ ծախուածներէն աւելի զեղջեալ գներով պիտի վաճառէ:

Իրեն գիտող գնորդները կատարելապէս գոհացնելու և մինչեւ ցարդ այս առեւտուրին շուրջը սեղի ունեցած գոյնութիւնները բաժնաւորահամար մեծ հոգածութիւն պիտի ունենայ. եւ անոնք որ Ա. Գլխար ստոմսերը ունին իրենց քով, մինչեւ վերջին Գլխար յիսթորիզ հանդերձ իրենց պիտի զրկուի, պատշաճ ժամանակին:

Իր կեդրոնատեղին է Մուսքիի մէջ Պ. ԳՕՆՕ-ՄՕՅԻ Պանքան:

Սոյն տոմսերէն կը ծախուին նաեւ իմուսքի, Տիար Կ. Պալըգճեանի խանութին:

Իւրաքանչիւր վիճակահանութեանց տոմսերու գները:

Համարակ 7 Գլխար. իւրաքանչիւրը 131)Ձէն, ամբողջ 96:

Պրոնավիկ 6 Գլխար. իւրաքանչիւրը 16 դրուէն, ամբողջ 96:

ՄԱՆՕԹ. — Հունգարական տոմսերու Ա. Գլխար թիւերը արդէն հասած են և հրապարակ ելած: 1 — 8

ԿՈՊԷՌՊԵՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉԱՏՈՒՆ

Տանկերու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և փորձառութիւն ստացած է:

Պուսայ մէջ Ապտուլլահ եղբարց տան, ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքին մէջ վերջին անգամ Լէ. քէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Եօզպէի ի յէ Շարխա Դամաշ 0ԹԷԼ ԵԷԷԷՐՏՄԻ ճիշտ գիմաց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և դուրսը կառուցներ ի հարկին:

Ակրակահալման բնական մեծութեամբ: Կենդանադիրներ ամբողջութեամբ քննալով որոնք երբէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միլիմետրի: Իւղաներկ և ջրաներկ պատկերներ և ընդունակարի և պատկերահանութեան վերարեբեալ յանձնարարութիւններ կ'ընդունին ողբոյ, ճեպէրոյրման և ընդ: Իրեն գիտող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն դուրսուոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ Կ Ե Ն Ա Յ Ա Պ Ա Յ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ն

ԱԿՏԱՐԻ ԵՒ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍԵՐ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՍԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՏՕՔԹ. Ա. Յ. ԻԵՐԵՍՈՒԹԵԱՆ

Ի Շարխա Գրոք-Պ. յ. թիւ 20

Իր ՉԻԻ խորհրդակցութիւնները սակից վերջը, միայն սպաւոր ստերը կ'ու օրէ առաջ ժամը (ը. և.) 9էն 11 սրտած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիմել ուղղապատ հիւանդներու: 4 — 8

ՏԻՐԱՆ ՀԻՒՐՄԻԻԶԵԱՆ

Շարա Մոսուալէս Աղիվ, իզորիս ղեկավարմանին ֆով:

Իրեն գիտող յաճախորդաց, սովորական քանակներով և նորաձեւութեան համաձայն, ձեւաւոր հագուստներ պատրաստել կը խոստանայ իր ստ շախաւոր գներով:

Փորձի համար անգամ մը միայն հոն գիմողը, սրտի գոհունակութեամբ պիտի մեկնի և ճաշակաւոր ու ձեւաւոր զգեստ ունենալու համար դարձեալ Հիւրմուղեանը պիտի փնտռէ: 6 — 8

ԳՓՔՔ ՈՐԶՈՂ ՆՇՐՈՒՆ

Գահիրէի և շրջակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրուցիւն մը տալու մտօք կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գերբ. (Դասակալ, Դպրոցակալ, Դիւանակալ, Դրակալ Արուեստակալ, Բանասիրակալ, Վիպակալ եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիէննա, կարելի է դիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ գիմելով Տիար Կ. Նաւասարգեանի, Գալատեան վարժարան Հայոց ի Գահիրէ:

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՄԵՆՈՑԹ

Ապրիլ Շարա Բուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր սպրանքներով կեղծ սկուաներ:

Կը գաղթեցնէ վայրկեանապէս սկուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած սկուաներուն տոկունութիւնն առ հուազն կրկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ճրի գարմանում, ամեն օր կ'էսօրէ ետք ժամը 4 — 5:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակաւոր յ'Աղլեքսանդրիա: